



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի
Ա. Թունյանի

Քննության առնելով Վահան Հայրապետյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Վահան Հայրապետյանը 24.03.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. Դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

3. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

Դիմողը նշում է, որ՝ «...Երբ քաղաքացու բողոքը հետաքննության մարմնի անգործության դեմ վերադասը հաշվի չի առնում, իսկ դատարանը պարտադիր

պայման է բերում՝ հ. 290-ի 1-ն մասը, որ քաղաքացին չի կարող անմիջապես դիմել դատարան»՝ դա դատարանի մատչելիության և դատաքննության սահմանադրական իրավունքի խախտում է: Քաղաքացին չպետք է ամիսներով նյարդեր քայքայի, դիմի վերադասության կարգով դատախազին, վերադաս դատախազին, ՀՀ գլխավոր դատախազին և նոր միայն դիմի դատարան: Նման վարչարարությունը չի բխում արդարադատության շահերից և մարդու իրավունքների խախտում է: Նման դեպքում պետք է օրենքով երաշխավորվի, որ համապատասխան պաշտոնատար անձի կայացրած որոշման ու անգործության դեմ քաղաքացին կարողանա առանց նախապայմանների դիմել դատարան և իրականացվի դատաքննություն:

4. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

Դիմողը հետաքննիչ Թ. Մաթևոսյանի 2012թ. նոյեմբերի 12-ի որոշումը բողոքարկել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում, որը 2013 թվականի հունիսի 12-ի որոշմամբ մերժվել է:

Դիմողը բողոքարկել է այդ ակտը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում, որն էլ 2013 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2013 թվականի հունիսի 12-ի որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հունիսի 12-ի որոշման դեմ դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան, որն էլ 2013 թվականի սեպտեմբերի 5-ի որոշմամբ վերադարձվել է:

2016 թվականի նոյեմբերի 15-ին դիմողը կրկին նույն հիմքով և հիմնավորումներով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013 թվականի հուլիսի 19-ի որոշման դեմ: ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 23-ի որոշմամբ դիմողի բողոքը թողել է առանց քննության:

Նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2016 թվականին դիմողը կրկին անգամ վճռաբեկ բողոք ներկայացնելով փորձել է ընդամենը ՀՀ սահմանադրա-

կան դատարան դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետի նոր հաշվարկի հնարավորություն ապահովել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթը չի վերաբերում վճռաբեկ վարույթի շրջանակներում նոր երևան եկած հանգամանքներին, ուստի դիմողը բաց է թողել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված 6-ամսյա ժամկետը, որը նրա համար սկսել է հոսել ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 5-ի որոշումը հասանելի լինելու պահից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Վահան Հայրապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

12 ապրիլի 2017 թվականի
ՄԴԴԿՈ/1-8